ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի ՀՕ-202-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4)~~.~~ համայնքի եկամտային կարողություն՝ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված և սույն օրենքի շրջանակներում նախատեսված ~~հողի~~ անշարժ գույքի հարկի, փոխադրամիջոցների գույքահարկի, մասհանվող հարկերի, պետական տուրքերի և օրենքի «ա» մասով հատկացվող դոտացիաների հանրագումարը.».

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. «ա» մասով դոտացիաներ հատկացվում են այն համայնքներին, որոնց բնակչության քանակը չի գերազանցում 3500-ը~~:~~, ինչպես նաև այն համայնքներին, որոնց կազմում ընդգրկված են սահմանամերձ բնակավայրեր:

2. «ա» մասով բնակչության քանակը 3500-ը չգերազանցող յուրաքանչյուր համայնքին և սահմանամերձ համայնքների յուրաքանչյուր բնակավայրին դոտացիաները հատկացվում են համապատասխանաբար հավասարաչափ գումարներով, որոնց չափերը սահմանվում են տվյալ տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:~~«ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են հավասարաչափ գումարով, որի չափը սահմանվում է տվյալ տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:~~

3. Համայնքի բնակչության քանակը տվյալ համայնքի տարածքում հաշվառված բնակչության թիվն է՝ հաշվարկվող տարվան նախորդող տարվա տարեսկզբի (հունվարի 1-ի) դրությամբ:

4. Սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

54. «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Դ^{ա} = ՀԹ_{ա} \times Ա_{դ} + ԲՍԹ \times Ա_{ս} -$$, որտեղ՝

Դա-ն - «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է,

ՀԹա-ն - «ա» մասով դոտացիա ստացող բնակչության բանակը 3500-ը չգերազանցող համայնքների ընդհանուր թիվն է,

Ադ-ն - «ա» մասով բնակչության բանակը 3500-ը չգերազանցող մեկ համայնքին հատկացվող դոտացիայի գումարի չափն է, ԲՍԹ-ն - «ա» մասով դոտացիա ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ընդհանուր թիվն է,

Ասն-ն - «ա» մասով սահմանամերձ համայնքների մեկ բնակավայրին հատկացվող դոտացիայի գումարի չափն է:

÷

56. Համայնքի դոտացիա ստանալը «ա» մասով չի բացառում նույն համայնքի դոտացիա ստանալը նաև «բ» մասով: «ա» մասով հատկացվող դոտացիաների միջոցները ներառվում են այդ միջոցները ստացող համայնքների եկամտային կարողության գործակցի հաշվարկում՝ որպես լրացուցիչ եկամուտ:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը և 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Համայնքի եկամտային կարողությունը տվյալ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված և սույն օրենքի շրջանակներում նախատեսված հետևյալ եկամտատեսակների հանրագումարն է.

1) ~~հողի~~ անշարժ գույքի հարկ,

2) փոխադրամիջոցների գույքահարկ.

Համայնքի անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների ~~հողի հարկի և~~ գույքահարկի հաշվարկային գումարի ցուցանիշները յուրաքանչյուր համայնքի գծով օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարում այդ համայնքի բյուջե վճարման ենթակա անշարժ գույքի ~~հողի~~ հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարներն են (առանց անշարժ գույքի

հարկի և փոխադրամիջոցների ~~հողի հարկի և~~ գույքահարկի գծով՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա տարեսկզբի (հունվարի 1-ի) դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա ընթացքում հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների), ավելացված Հայաստանի Հանրապետության օրենքներով և համայնքների ավագանիների ընդունած որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին անշարժ գույքի~~հողի~~ հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների հաշվարկային տարվան նախորդող երկրորդ տարվա բյուջեներում եկամուտների կորուստների գումարները.».

«3. Համայնքի եկամտային կարողությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԵԿ_i = \cancel{ՀՀ_i}\ ԱԳՀ_i + ՓԳՀ_i + ՄՀ_i + ՊՏ_i + Ա^Դ,$$ որտեղ՝

~~$ՀՀ_i$~~$ԱԳՀ_i$-ն - i-րդ համայնքի ~~հողի~~ անշարժ գույքի հարկի գումարն է,
$ՓԳՀ_i$-ն - i-րդ համայնքի փոխադրամիջոցների գույքահարկի գումարն է,
$ՄՀ_i$-ն - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,
$ՊՏ_i$-ն - i-րդ համայնքի պետական տուրքերն են,
$Ա^Դ$-ն - «ա» մասով մեկ համայնքին հատկացվող դոտացիայի գումարի չափն է:»:

~~5~~6. Համայնքի դոտացիա ստանալը «ա» մասով չի բացառում նույն համայնքի դոտացիա ստանալը նաև «բ» մասով: «ա» մասով հատկացվող դոտացիաների միջոցները ներառվում են այդ միջոցները ստացող համայնքների եկամտային կարողության գործակցի հաշվարկում՝ որպես լրացուցիչ եկամուտ:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) համայնքի բարձրադիրության ծախսային գործոն՝ $Կ^{ԲԳ}$ - ~~15~~ 20 տոկոս.

4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոն՝ $Կ^{ԲՔԳ}$- ~~25~~ 20 տոկոս.».

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում՝ ~~«0-3500 բնակիչ»,~~ «3501-5000 բնակիչ», «5001-20000 բնակիչ», «20001-150000 բնակիչ» և «150001-ից ավելի բնակիչ» արտահայտությունները համապատասխանաբար փոխարինել ~~«մինչև 3500 բնակիչ»,~~ «3501-20000 բնակիչ», «20001-50000 բնակիչ», «50001-200000 բնակիչ» և «200001-ից ավելի բնակիչ» արտահայտություններով:

Բնակչության քանակի միջակայք	**ՄԳ$_i$**
~~0~~ 0-3500 բնակիչ	1.0
3501-~~5000~~ 20000 բնակիչ	2.8
~~5001~~20001-~~20000~~ 50000 բնակիչ	2.0
~~20001~~50001-~~150000~~ 200000 բնակիչ	1.5
~~150001~~200001-ից ավելի բնակիչ	1.0

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

«ՏՄԳ$_i$ = 1 + (0,3~~1~~ x Հ$_i^{Մայր}$ + 0,~~3~~ 6 x Հ$_i^{Մարզ}$ + 0,~~6~~ 1x Հ$_i^{Շրջ}$) / (0,~~1~~ 3 x Հ$_{միջ}^{Մայր}$ + 0,~~3~~ 6 x Հ$_{միջ}^{Մարզ}$ + 0,~~6~~ 1 x Հ$_{միջ}^{Շրջ}$), որտեղ՝.»:

Հոդված 7. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «1,1» և «1,25» թվերը համապատասխանաբար փոխարինել «1,2» և «1,4» թվերով»:

Համայնքի բարձրադիրության նիշի միջակայք	**ԲԳ$_i$**
մինչև 1700մ	1,0
1700-2000մ	~~1,1~~1.2
2000մ -ից ավել	~~1,25~~1.4

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԲՔԳ$_i$ = 1 + 0,~~2~~15(ԲԹ$_i$ - 1) , որտեղ՝.».

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում՝ «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը» և «Հայաստանի Հանրապետության մարզպետարանները» բառերը

համապատասխանաբար փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը» և «Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը» բառերով:

«1. Դոտացիաների հաշվարկման մեջ օգտագործվող՝ համայնքներին վերաբերող տվյալների աղբյուրներն են՝

1) ծախսային գործակիցների տվյալների համար՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը~~Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը~~, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի~~, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների~~ բնագավառում պետական լիազոր մարմինը, Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը~~մարզպետարանները~~ և Հայաստանի Հանրապետության համայնքները.:»

1. Դոտացիաների հաշվարկման մեջ օգտագործվող՝ համայնքներին վերաբերող տվյալների աղբյուրներն են՝

1) ծախսային գործակիցների տվյալների համար՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը ~~Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը~~, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում պետական լիազոր մարմինը, Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերը ~~մարզպետարանները~~ և Հայաստանի Հանրապետության համայնքները.

Հոդված 10. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերում և 3-րդ մասում՝ «փոխհատուցման գումարի» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «բացառությամբ 2023 թվականի» բառերը, նույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

«2. 2022 և 2023 թվականներին «ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են՝

1) տվյալ համայնքին 2016 թվականին տրամադրված դոտացիաների փաստացի գումարի չափով (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում

համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի՝ բացառությամբ 2023 թվականի).

2) 2016-2023 թվականներին ձևավորված բազմաբնակավայր համայնքների՝ «ա» գործոնով նախատեսվող դոտացիայի գումարը հավասար է 2016 թվականի դրությամբ բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված նախկին համայնքների դոտացիաների (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի՝ բացառությամբ 2023 թվականի) հանրագումարին:

3. 2022 և 2023 թվականների համար «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$Դ^{Ա}$=$Դ^{2016\ փաստացի}$, որտեղ՝

$Դ^{Ա}$-ն - «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է,

$Դ^{2016\ փաստացի}$ -ն - 2016 թվականին համայնքներին փաստացի հատկացված դոտացիաների (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի՝ բացառությամբ 2023 թվականի) ընդհանուր գումարն է:

~~5. Անկախ սույն օրենքով սահմանված դոտացիայի հաշվարկման կարգից՝ 2017 թվականին և հաջորդ տարիներին համայնքներին հատկացվող համահարթեցման դոտացիաները հաշվարկվում և հատկացվում են ոչ պակաս, քան 2016 թվականին փաստացի հատկացված դոտացիաները (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարը):».~~

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա: